ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի ՀԵՌԱԿԱ ՆԻՍՏԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ

ք. Երևան **«18» դեկտեմբերի 2024 թ.**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) աշխատակարգի 19-րդ կետը և Խորհրդի նախագահի 2024 թվականի դեկտեմբերի 16-ի № 4-Լ որոշումը՝ Տեսչական մարմնի Խորհրդի հերթական նիստը որոշվել է անցկացնել հեռակա էլեկտրոնային քվեարկությամբ:

Խորհրդի հեռակա էլեկտրոնային քվեարկությունը սկսվել է 2024 թվականի դեկտեմբերի 18-ին, ժամը 9^{00}-ին և ավարտվել՝ ժամը 12^{00}-ին:

Քվեարկությանը մասնակցել են՝

Խորհրդի նախագահ՝

Ժ. Անդրեասյանը - Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար,

Խորհրդի անդամներ՝

Տ. Հակոբյանը - Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ,

Վ. Սիրունյանը - Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ,

Ա. Բաղդասարյանը - «Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամի անդամ,

Բ. Փափազյանը	- «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի խորհրդի անդամ,
Ա. Բախշյանը	- «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության կրթության հարցերով խորհրդական,
Ա. Հակոբյանը	- «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի արտաքին կապերի գծով տնօրեն:

ՕՐԱԿԱՐԳ

Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի 2024 թվականի բյուջեում ներքին հոդվածային վերաբաշխում կատարելուն հավանություն տալու մասին:

Օրակարգային հարցի քվեարկության վերաբերյալ անհրաժեշտ նյութերն ուղարկվել են Խորհրդի անդամների էլեկտրոնային փոստի հասցեներին: Քվեարկությունը կայացել է:

Քվեարկության արդյունքում՝

1. Ժ. Անդրեասյանը օրակարգի հարցին քվեարկել է «կողմ»,
2. Տ. Հակոբյանը օրակարգի հարցին քվեարկել է «կողմ»,
3. Վ. Սիրունյանը օրակարգի հարցին քվեարկել է «կողմ»,
4. Ա. Բաղդասարյանը օրակարգի հարցին քվեարկել է «կողմ»,
5. Բ. Փափազյանը օրակարգի հարցին քվեարկել է «կողմ»,
6. Ա. Բախշյանը օրակարգի հարցին քվեարկել է «կողմ»,
7. Ա. Հակոբյանը օրակարգի հարցին քվեարկել է «կողմ»:

Քվեարկության արդյունքները՝
Հարց՝ 7 «կողմ»:

Այսպիսով, Խորհրդի հեռակա էլեկտրոնային քվեարկության նիստին մասնակցած 7 անդամներից 7-ը օրակարգի հարցին քվեարկել են «կողմ»:

Սույն արձանագրությանը ծանոթանալուց և համաձայնություն տալուց հետո Խորհուրդը որոշեց.

Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի 2024 թվականի բյուջեում ներքին հոդվածային վերաբաշխում կատարելուն:

12/18/2024

X

ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Խորհրդի նախագահ՝ Signed by: ANDREASYAN ZHANNA 6402810169

_____ **Ժ. Անդրեասյան**

ստորագրություն

Խորհրդի քարտուղար՝

_____ **Ա. Գևորգյան**

ստորագրություն